ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Պետրոսյան,

ի պատասխան Ձեր 10.04.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 5-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների մասով՝ գնումները համակարգողը, պատասխանատու ստորաբաժանումը, գնահատող հանձնաժողովը:

Կարգի 7-րդ կետի համաձայն՝ «Պատվիրատուի ղեկավարը սահմանում է գնումները համակարգող, պատասխանատու ստորաբաժանում…»:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությունն օրենքով սահմանված կարգով, որպես գնումները համակարգող ստորաբաժանում, կազմակերպում է գնման ընթացակարգեր՝ պատասխանատու ստորաբաժանումների կողմից ներկայացված գնման հայտերի հիման վրա, որտեղ վերջիններիս կողմից տրամադրվում են նաև գնման առարկաների գնման գները (նախահաշվային գին):

Գնման ընթացակարգերի իրականացման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ հաղթող մասնակցի հետ կնքվում է գնման պայմանագիր, որի շրջանակում պատասխանատու ստորաբաժանումները հետևում են պայմանագրի կողմի (կապալառու, մատակարար և այլն)՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին:

Կարգի 13-րդ կետի համաձայն՝ «Պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները չեն կարող վերապահվել գնումները համակարգողին:»:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության կողմից իրականացված գնման ընթացակարգերի հրավերները, գնահատող հանձնաժողովների արձանագրությունները, պայմանագիր կնքելու մասին հայտարարությունները, կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները և պայմանագրերը հրապարակվում են «www. gnumner. am» և «Armeps/PPCM» կայքերում, որտեղ նշվում են բոլոր մասնակիցների անվանումները, իրենց կողմից ներկայացված գնային առաջարկները, գնահատող հանձնաժողովների կայացրած որոշումները՝ մասնակիցների գնման հայտերը մերժելու և վերջիններիս գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցման հիմքերը և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետարանը, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, մրցակցային գնման գործընթացներն

իրականացնում է բացառապես էլեկտրոնային ձևով, ցանկացած գնման գործընթացի մասին համապատասխան տեղեկատվությունը՝ այդ թվում մեկ անձից կատարվող գնումների վերաբերյալ տեղեկատվությունը, հասանելի է վերը նշված հարթակներում:

Տեղեկացվում է նաև, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությունն իր գործառույթների և վարչության կանոնադրության շրջանակներում չի իրականացնում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների թվաբանական տարբերությունների՝ դրանց նախնական արժեքից շեղումների և այլ վերլուծություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ